

ւոր պահեցողութիւն մ'էր անոնց կեանքը: Սկսելով նոյն ինքն հայ վանականութեան հիմնադիր Լուսաւորչէն, երբ անապատը կ'առանձնանար ճգնելու, սովոր էր առօրեայ սնունդը «խոտաբուտ ճարակօքն» կատարել (Ագթ. 631): Իւր որդին Արիստակէս դեռ կրօնաւոր, նուիրուած էր «քաղցի եւ ծարաւոյ եւ բանջանրաճաշակ կենաց» (նոյն, 640): Ճգնասուն Գանիէլ եւ պիսկոպոսի կերակուրն էին «արմատք բանջարոց» (Փաւս. 37): Նոյն Գ դարուն նըշանաւոր էին Գինդ վանահայրն եւ ուրիշ շատեր, որ կը նկարագրուին «խոտաճարակք՝ ընդարուտք՝ արմատակերք» (նոյն, 271): Ս. Մեսրոբ անապատի մէջ նոյնպէս «բանջարաճաշակութեանց» տուած էր ինքզինքը (Կոր. 7):

Եւ այդ չոր սնունդը կը շարունակուի յաջորդ դարերու մէջ եւս: Այսպէս Վարագայ ճգնաւորը Թողիկ «ընդակեր» մ'էր (Հյպտ. 230): Թաթուլ եւ Վարոս «խոտաբուտ տքնութեամբ» կ'անցնէին իրենց կեանքը (անդ, 190): Յովհաննէս կթղպատմագիրն այցելութեան երթալով Մանեայ եւ Լուսաւորչի այրերուն, կը տեսնէր հոն «արս կուսակրօնս .. խոտաճարակս» (359): Գր. Մագիստրոս՝ Սանահնի վանականաց գրած նամակին մէջ իւր